DOI: 10.59560/18291155-2025.4-298

ԲՈՐՅԱ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ամփոփագիր

Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկի՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի վերլուծությանը և իրավական փիլիսոփայության բացահայտմանը: Հետազոտության կենտրոնում գտնվում է սահմանադրական իրավակարգավորումների արժեքաբանական ընկալման դիտանկյունից մարդու հիմնական իրավունքների և ազատությունների համակարգում տվյալ սկզբունքի տեղն ու նշանակությունը, ինչպես նաև դրա դերակատարությունը արդարադատության իրականացման և հանրային իշխանության սահմանափակման գործում: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ անմեղության կանխավարկածը հանդես է գալիս ոչ միայն որպես քրեադատավարական երաշխիք, այլև որպես սահմանադրական արժեք, որը սերտորեն առնչվում է իրավական պետության, մարդկային արժանապատվության պաշտպանության և իրավունքի գերակայության սկզբունքներին:

Հոդվածի նպատակն է բացահայտել անմեղության կանխավարկածի սահմանադրաիրավական բովանդակությունն ու դրա զարգացման ընթացքը Հայաստանի Հանրապետությունում՝ մեթոդաբանական տարբեր մոտեցումների գնահատմամբ ընդունված՝ 1995, 2005 և 2015 թվականների խմբագրություններով Սահմանադրության համադրված վերլուծության հիման վրա, ինչպես նաև գնահատել դրա իրացման մեխանիզմները իրավակիրառ պրակտիկայում: Աշխատանքում ուսումնասիրվում են անմեղության կանխավարկածի ամրագրման միջազգային իրավական չափանիշները և դրանց ազդեցությունը ազգային իրավական համակարգի վրա: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկային, որը ձևավորում է տվյալ սկզբունքի մեկնաբանման պարտադիր մոտեցումները:

Հոդվածում հիմնավորվում է եզրակացությունը, ըստ որի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական մոտեցումն անմեղության կանխավարկածի նկատմամբ բնութագրվում է շարունակականությամբ՝ միաժամանակ արտա-

հայտվելով դրա նորմատիվ ձևի էվոլյուցիայով: Ընդգծվում է, որ գործող՝ 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը պահպանում է տվյալ սկզբունքի հիմնարար բովանդակությունը՝ միաժամանակ խորացնելով դրա կապը մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների հետ: Աշխատանքի արդյունքում արվում է եզրակացություն՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական երաշխիքների արդի համակարգում անմեղության կանխավարկածի կենտրոնական դերի վերաբերյալ և դրա խիստ պահպանման անհրաժեշտության մասին՝ ոչ միայն դատարանների, այլև հանրային իշխանության բոլոր սուբյեկտների կողմից:

Հիմնաբառեր. անմեղության կանխավարկած, սահմանադրական իրավունք, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, մարդու իրավունքներ և ազատություններ, իրավական պետություն, դատական պրակտիկա, Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Նախաբան

Անմեղության կանխավարկածը սահմանադրական իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկն է, որը որպես մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիք, կոչված է ապահովելու արդարադատության պատշաճ իրականացումը և մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Այս սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր անձ համարվում է անմեղ այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղավորությունը օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել և հաստատվել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Նշված հիմնարար դրույթը ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդված 11), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (հոդված 14, մաս 2) և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում (հոդված 6, մաս 2), ինչը վկայում է դրա համընդհանուր ճանաչված բնույթի մասին: Ժողովրդավարական բազմաթիվ պետությունների սահմանադրական իրավունքում անմեղության կանխավարկածը ներառված է հիմնական սահմանադրական սկզբունքների շարքում՝ որպես քրեական դատավարության շրջանակում անձի իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիք: Այն հանդես է գալիս ոչ միայն որպես քրեադատավարական նորմ, այլև որպես սահմանադրական երաշխիք, որը սերտորեն կապված է բարձրագույն արժեքների՝ մարդու արժանապատվության և իրավունքի գերակայության հետ:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո, հաղթահարելով մարդու բնական իրավունքների փոխարեն պետության կողմից «տրված» (ստեղծված) իրավունքի («positive law») առաջնայնության՝ խորհրդային ձևախեղված իրավամտածողությունը, արտահայտելով քաղաքակրթական արժեքների և սահմանադրական մշակույթի ընկալման հասարակական գիտակցությունն ու սահմանադրականության արժեքային կողմնորոշիչները, արձանագրելով մարդու

բնական և անօտարելի իրավունքներն ու ազատությունները պետության կողմից որպես բարձրագույն արժեք դիտարկելու և սահմանադրական երաշխիքների ամրագրմամբ երաշխավորված պաշտպանության ապահովման՝ քաղաքական և հասարակական կամքը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ դեռևս 1995 թվականին, ի թիվս մարդու իրավունքների բնագավառում այլ հիմնարար արժեքների, ամրագրվել է անմեղության կանխավարկածի սկզբունքը մարդու հիմնական իրավունքների և ազատությունների շարքում: Դրանից ի վեր տվյալ սկզբունքի սահմանադրաիրավական կարգավորումը փոփոխությունների է ենթարկվել՝ 2005 և 2015 թվականների սահմանադրական բարեփոխումների շրջանակում: Այնուամենայնիվ, անմեղության կանխավարկածը մշտապես պահպանել է իր առանցքային նշանակությունը՝ որպես արդարադատության համակարգի և Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմնասյուն: Սույն հարցի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է ինչպես քրեական դատավարության շրջանակում քաղաքացիների իրավունքների պաշտպանության գործում սկզբունքի ունեցած կարևորությամբ, այնպես էլ դրա սահմանադրական ամրագրման էվոլյուցիայի և գործնական կիրառման խորքային վերլուծության անհրաժեշտությամբ՝ ներառյալ դատական պրակտիկայի օրինակները, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները:

Հոդվածի նպատակն է վերլուծել անմեղության կանխավարկածի սկզբունքի տեղն ու իրավաբանական բովանդակությունը Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի համակարգում, բացահայտել դրա ձևակերպման փոփոխությունները 1995, 2005 և 2015 թվականների Սահմանադրություններում, ինչպես նաև ուսումնասիրել տվյալ սկզբունքի իրացման մեխանիզմները իրավակիրառ պրակտիկայում: Նշված նպատակի իրագործման համար աշխատանքի շրջանակում առաջադրվում են հետևյալ խնդիրները.

(1) բացահայտել անմեղության կանխավարկածի հասկացությունն ու նշանակությունը որպես սահմանադրաիրավական սկզբունք,

(2) համադրական վերլուծության ենթարկել Հայաստանի Հանրապետության 1995, 2005 և 2015 թվականների Սահմանադրությունների համապատասխան դրույթները՝ պարզելով դրանց ընդհանրություններն ու տարբերությունները,

(3) վերլուծել, թե ինչպես է տվյալ սկզբունքը ապահովվում և մեկնաբանվում դատական պրակտիկայում՝ թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում, և

(4) ընդհանրացնել անմեղության կանխավարկածի դերը Հայաստանի Հանրապետության արդի սահմանադրական համակարգում:

1) Անմեղության կանխավարկածը. հասկացությունը և միջազգային չափանիշները

Անմեղության կանխավարկածը ենթադրում է, որ հանցագործության մեջ մեղադրվող անձը չի կարող դիտվել կամ անվանվել մեղավոր այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղավորությունը օրենքով սահմանված կարգով չի հաստատվել

դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով[1]: Սույն կանոնը ապացուցման բեռը վերագրում է մեղադրանքի կողմին և պաշտպանում է մեղադրյալին անհիմն մեղադրանքներից ու դատապարտումից: Միջազգային իրավունքում այս սկզբունքը ստացել է համընդհանուր ճանաչում: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս ընդգծել է, որ անմեղության կանխավարկածի խախտում է համարվում ցանկացած պաշտոնական հայտարարություն կամ դատական ակտ, որով արտահայտվում է անձի մեղավորության վերաբերյալ դիրքորոշում՝ նախքան նրա մեղքի ապացուցումը օրենքով սահմանված ընթացակարգով[2]: Այլ կերպ՝ ոչ միայն դատարանները, այլև պաշտոնատար անձինք մինչև դատավճռի կայացումը պարտավոր են զերծ մնալ անձին հրապարակայնորեն մեղավոր ներկայացնելուց: Սա վերաբերում է թե՛ պետական իշխանության ներկայացուցիչների հայտարարություններին, թե՛ մինչդատական փուլերում տրվող ձևակերպումներին. անզգույշ խոսքերի օգտագործումը, որը ենթադրում է մեղավորություն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից գնահատվում է որպես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում[3]:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը սերտորեն առնչվում է այլ հիմնարար իրավունքների և արժեքների հետ: Այն բխում է արդար դատաքննության իրավունքից, որը երաշխավորվում է միջազգային իրավական ակտերով, և հանդիսանում է դրա իրականացման առանցքային նախապայմանը[4]: Միևնույն ժամանակ, անմեղության կանխավարկածն արտացոլում է մարդու արժանապատվության և անհատական ազատության նկատմամբ հարգանքը[5]. անթույլատրելի է անձին վերաբերվել որպես հանցագործի, քանի դեռ նրա մեղավորությունը չի հաստատվել դատարանի կողմից: Սահմանադրական իրավունքի

---

[1] ***Новичкова Е.Е., Матвеева О.С.*** *Принцип презумпции невиновности в административном праве // Социальное управление. 2023. Т. 5. № 7. - С. 307–313,*

URL: https://smgmt.ru/index.php/smgmt/article/view/82; ***Решняк М.Г., Боташева З.Х.*** *Презумпция невиновности: к вопросу о «незыблемости» отдельных международных принципов // Пробелы в российском законодательстве. 2022. Т. 15. №5. - С. 381-385;* ***Астафичев П.А.*** *К вопросу о презумпции невиновности в российском публичном праве: взгляд конституционалиста // Вестник Санкт-Петербургского университета МВД России. 2025. № 2 (106). - С. 61-71, https://doi.org /10.35750/2071-8284-2025-2-61-71*

[2] *European Court of Human Rights - Case of Vardan Martirosyan v. Armenia (Application no. 13610/12), 2021 թվականի հունիսի 15-ի որոշումը // LawEuro, 2021, URL: https://laweuro.com/?p=15291*

[3] *Նույն տեղում:*

[4] ***Chia, M.*** *The Presumption of Innocence: A Golden Thread Always To Be Seen. Singapore Law Journal, 2021 (Forthcoming), SSRN Paper No. 3787833, URL: https://ssrn.com/abstract=3787833*

[5] ***Iacob, O.*** *Brief Analysis of the Importance given to the Presumption of Innocence at International and National Level // Athens Journal of Law. 2025. Vol. 11, No. 3, p. 337–356,* ***Богатых Н.П.*** *Принцип уважения чести и достоинства личности в совокупности с другими принципами в уголовном процессе // Вестник Московского университета им. С. Ю. Витте. Серия 2: Юридические науки. 2022. № 2.1 (33). - С. 5–10.*

համատեքստում անմեղության կանխավարկածը հաճախ դիտարկվում է իրավունքի գերակայության (իրավական պետության) սկզբունքի բաղադրիչ տարր[1]: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը հռչակում է Հայաստանը որպես իրավական պետություն (ՀՀ Սահմանադրություն, հոդված 1), ինչպես նաև ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է, մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են, հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (ՀՀ Սահմանադրություն, հոդված 3): Սահմանադրահիրավական համատեքստում անմեղության կանխավարկածը հանդես է գալիս որպես անձի իրավունքների պաշտպանության կարևորագույն երաշխիք և քրեական հետապնդման ոլորտում հանրային իշխանության սահմանափակման հիմնարար միջոց:

2) <u>Անմեղության կանխավարկածի սահմանադրական ամրագրման էվոլյուցիան (1995–2015թթ.)</u>

Հայաստանի անկախ Հանրապետության առաջին Սահմանադրությունն ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ին՝ ժողովրդական հանրաքվեի միջոցով: Դրանով առաջին անգամ հայ սահմանադրականության պատմության մեջ անմեղության կանխավարկածն ամրագրվեց որպես սահմանադրական սկզբունք: Անմեղության կանխավարկածի նորմը ներառվեց մարդու իրավունքներին և ազատություններին նվիրված գլխում: Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրության 41-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ դատավճռով»: Սահմանադրությունը լրացուցիչ հստակեցնում էր, որ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, իսկ չհաստատված կասկածները ենթակա են մեկնաբանման մեղադրյալի օգտին:

Այսպիսով, 1995 թվականի Սահմանադրությունը վերարտադրում էր անմեղության կանխավարկածի դասական՝ եռատարր ձևակերպումը, որը բնորոշ էր տվյալ ժամանակաշրջանի հետխորհրդային երկրների սահմանադրական կարգավորումներին, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությանը: Մասնավորապես, այն ներառում էր՝

(1) անձի անմեղ համարվելու սկզբունքը մինչև դատարանի դատավճռի կայացումը,

(2) մեղադրյալի ազատումն իր անմեղությունը ապացուցելու պարտականությունից՝ ապացուցման բեռը վերագրելով մեղադրանքի կողմին, և

[1] ***Шупицкая О.Н.*** *Презумпция невиновности как конституционный феномен // Правоприменение. 2023. Т. 7. № 1. - С. 43–51.*

(3) *in dubio pro reo* կանոնը՝ չփարատված կամ չհաստատված կասկածների մեկնաբանությունը մեղադրյալի օգտին: Նշված սահմանադրական ձևակերպումն արտացոլում էր Հայաստանի Հանրապետության հանձնառությունը մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներին՝ արդեն ազգային իրավական համակարգի ձևավորման սկզբնական փուլում:

Հարկ է նշել, որ անմեղության կանխավարկածի ամրագրումը սահմանադրական մակարդակում կրում էր ոչ միայն հռչակագրային, այլև գործնական նշանակություն: Բոլոր պետական մարմինները, այդ թվում՝ նախաքննության և դատական իշխանության մարմինները, պարտավոր էին իրենց գործունեությունն իրականացնել՝ առաջնորդվելով տվյալ նորմով, որն օժտված էր բարձրագույն իրավաբանական ուժով: Սկզբունքի խախտումը կարող էր հանգեցնել օրենքների կամ պետական մարմինների գործողությունների հակասահմանադրական ճանաչման: Դեռևս Սահմանադրության ուժի մեջ մտնելու առաջին տարիներին անմեղության կանխավարկածը դարձավ քրեական դատավարության բարեփոխումների հիմնաքարերից մեկը. 1998 թվականին ընդունվեց Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը, որն ուղղակիորեն զարգացնում էր սահմանադրական դրույթները՝ ամրագրելով, որ մեղադրանքը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, պետք է ապացուցվի բավարար ապացույցներով, իսկ բոլոր չփարատված կասկածները մեկնաբանվում են մեղադրյալի օգտին:

Այսպիսով, 1995 թվականի Սահմանադրությունը դրեց ամուր սահմանադրահիրավական հիմք այնպիսի իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար, որն ուղղված էր քրեական դատավարության շրջանակում անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությանը:

2005 թվականի սահմանադրական փոփոխությունները, վերաբերելի մասով, կարելի է մեկնաբանել որպես սկզբունքի վերահաստատում: 2005 թվականի նոյեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց Սահմանադրության փոփոխությունների փաթեթի վերաբերյալ հանրաքվե: Նշված սահմանադրական բարեփոխումները հիմնականում ուղղված էին ժողովրդավարության ամրապնդմանը, իշխանությունների հավասարակշռության ապահովմանը և մարդու իրավունքների երաշխիքների ընդլայնմանը՝ մեծապես նաև Եվրոպայի խորհրդի նկատմամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունների համատեքստում: Չնայած պետական իշխանության համակարգում և առանձին իրավունքների կարգավորման մեջ կատարված էական փոփոխություններին՝ անմեղության կանխավարկածի վերաբերյալ սահմանադրական դրույթը փաստացի մնաց անփոփոխ: *2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունն ամբողջությամբ պահպանեց 1995 թվականին ամրագրված նույն ձևակերպումը:*

Մասնավորապես, Սահմանադրության երկրորդ գլխում՝ 2–րդ հոդվածում, տեղ գտած համապատասխան դրույթը շարունակում էր ամրագրել, որ հանցագործության մեջ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, որ մեղադրյալը պարտավոր չէ

ապացուցել իր անմեղությունը, իսկ չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:

Այսպիսով, անմեղության կանխավարկածի բոլոր երեք բաղադրիչները՝ անմեղության նախնական ենթադրությունը, ապացուցման բեռի վերագրումը մեղադրանքի կողմին և in dubio pro reo կանոնի կիրառումը, շարունակում էին հստակ և միանշանակ ամրագրված մնալ սահմանադրական մակարդակում:

Տվյալ դրույթի անփոփոխ պահպանումը ոչ թե պատահական էր, այլ գիտակցված և հիմնավորված ընտրության արդյունք: 2005 թվականին անմեղության կանխավարկածի սկզբունքն արդեն ընկալվում էր որպես Հայաստանի իրավական համակարգի անօտարելի տարր, որը լիովին համահունչ էր մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշներին: Օրենսդիրը որևէ անհրաժեշտություն չէր տեսնում վերանայել կամ փոխել մի ձևակերպում, որը կնքված էր միջազգային պարտավորություններին, մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի պահանջներին համապատասխան: Բացի այդ, 1995–2005 թվականների ընթացքում ձևավորվել էր սահմանադրական որոշակի պրակտիկա և տեսական մոտեցում, որոնք հաստատում էին անմեղության կանխավարկածի հիմնարար բնույթը:

Այս առումով 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները, որոնք միաժամանակ ուժեղացրին դատարանների և մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի դերը, նպաստեցին սահմանադրական իրավունքի պաշտպանության մեխանիզմների ընդհանուր ամրապնդմանը՝ ներառյալ յուրաքանչյուր անձի՝ դատարանի դատավճռից առաջ մեղավոր չհամարվելու իրավունքի առավել արդյունավետ երաշխավորումը:

Արդեն 2015 թվականի սահմանադրական բարեփոխման արդյունքում նորմը շարադրվեց նոր խմբագրությամբ: 2015 թվականի դեկտեմբերի 6-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքում ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նոր խմբագրությունը: 2015 թվականի սահմանադրական բարեփոխումը էականորեն փոփոխեց պետական կառավարման մոդելը՝ Հայաստանը կիսանախագահական համակարգից անցում կատարեց խորհրդարանական հանրապետության, ինչպես նաև էապես վերանայեց մարդու իրավունքներին և ազատություններին նվիրված բաժինը՝ այն մոտեցնելով միջազգային արդի չափանիշներին և իրավաբանական տերմինաբանությանը: Անմեղության կանխավարկածը պահպանեց իր տեղը հիմնական իրավունքների շարքում, սակայն դրա սահմանադրական ձևակերպումը ենթարկվեց որոշակի խմբագրական փոփոխության: Գործող՝ 2015 թվականի Սահմանադրությամբ անմեղության կանխավարկածը ամրագրված է երկրորդ գլխի 66-րդ հոդվածում, որի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

Նշված դրույթով սկզբունքի առանցքային բովանդակությունը էապես չի փոխվել և համարժեք է 1995 և 2005 թվականների Սահմանադրություններում

ամրագրված դրույթներին: Սակայն ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ նախկին խմբագրություններին բնորոշ լրացուցիչ պարզաբանումները՝ մեղադրյալի՝ իր անմեղությունն ապացուցելու պարտավորության բացակայության և չփարատված կասկածները նրա օգտին մեկնաբանելու վերաբերյալ, նոր խմբագրության տեքստում բացակայում են: Նորմը ձևակերպված է համառոտ՝ ընդգծելով անմեղության կանխավարկածի հիմնական ենթադրությունը:

Առաջանում է հարց, թե արդյոք նման խմբագրական սեղմումը նշանակում է սկզբունքի բովանդակային նեղացում սահմանադրական մակարդակում: Կարծում ենք, որ 2015 թվականի բարեփոխումների շրջանակում օրենսդիրը նպատակ չի ունեցել հրաժարվել անմեղության կանխավարկածի նախորդ բաղադրիչներից: Փոփոխությունները կրում են առավելապես համակարգման և ոճական բնույթ: Նոր Սահմանադրությունը ձգտել է խուսափել նորմերի կրկնությունից, ապահովել տեքստի համառոտությունն ու հստակությունը՝ մանրամասն կարգավորումն ու մեկնաբանությունը վստահելով օրենսդիր և դատական իշխանությանը: Մասնագիտական բացատրություններում արձանագրվում է, որ մեղադրյալին անմեղությունը ապացուցելու պարտականությունից ազատելու կանոնը և չփարատված կասկածները մեղադրյալի օգտին մեկնաբանելու պահանջը բխում են անմեղության կանխավարկածի էությունից և հանդիսանում են արդար դատաքննության իրավունքի համընդհանուր ճանաչված տարրեր[1]: Այդ կանոնները շարունակում են մանրամասնորեն կարգավորվել քրեական դատավարական օրենսդրությամբ և ձևավորվել դատական պրակտիկայի միջոցով:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության գործող քրեական դատավարության օրենսգիրքը պահպանում է այն դրույթը, որի համաձայն՝ մեղադրական եզրահանգումները չեն կարող հիմնվել ենթադրությունների վրա և պետք է հաստատված լինեն բավարար ապացույցներով, իսկ անձի մասնակցությունը հանցագործությանն ապացուցված չլինելը ենթադրում է քրեական հետապնդման դադարեցում (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 12): Այսպիսով, թեև Սահմանադրության 2015 թվականի խմբագրությունն ուղղակիորեն չի վերարտադրում նախկին հոդվածի բոլոր ձևակերպումները, անմեղության կանխավարկածի իրավական բովանդակությունն ու պաշտպանական նպատակադրումը պահպանվել են ամբողջությամբ:

Կարևոր է ընդգծել նաև, որ 2015 թվականի սահմանադրական բարեփոխման շրջանակում զգալի ուշադրություն է դարձվել ազգային իրավական համակարգի և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների համադրմանը: Նոր Սահմանադրությամբ ամրագրվել է դրույթ, որի համաձայն՝ սահմանադրական իրավունքների և ազատությունների մեկնաբանման ընթացքում պետք է հաշվի առնվի այն միջազգային դատարանների և մարմինների

[1] ***Բաղդասարյան Գ.,*** *Անմեղության քրեադատավարական կանխավարկածն ու մեղավորության քրեաիրավական կանխավարկածը: Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն 2024, Vol. 15, No. 1(40), մայիս, էջեր 124-136, https://doi.org/10.46991/BYSU:C/2024.15.1.124*

դատավարական պրակտիկան, որոնք գործում են մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի հիման վրա (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 81): Սա նշանակում է, որ անմեղության կանխավարկածի մեկնաբանությունը ազգային դատարանների կողմից պետք է իրականացվի՝ ի թիվս այլ մոտեցումների, հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը:

Բացի այդ, 2015 թվականի Սահմանադրությունը հստակ նախատեսում է, որ արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում որոշ հիմնարար իրավունքներ կարող են ժամանակավորապես սահմանափակվել, մինչդեռ անմեղության կանխավարկածը ներառված է այն իրավունքների շարքում, որոնք որևէ պայմաններում չեն կարող կասեցվել: Այս հանգամանքը ևս մեկ անգամ հաստատում է տվյալ սկզբունքի հիմնարար և բացարձակ բնույթը սահմանադրական իրավունքի սկզբունքների համակարգում:

Արդյունքում, 2015 թվականի սահմանադրական բարեփոխումից հետո անմեղության կանխավարկածը պահպանեց իր կարգավիճակը որպես Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի առանցքային սկզբունքներից մեկը՝ կրելով նվազագույն խմբագրական փոփոխություններ, սակայն առանց բովանդակային սահմանների նեղացման: Նոր կառավարման մոդելի անցման պայմաններում Հայաստանը պահպանեց իրավական զարգացման շարունակականությունը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում՝ ապահովելով անմեղության կանխավարկածի սահմանադրական երաշխավորումը՝ ինչպես ազգային իրավական ավանդույթներին, այնպես էլ երկրի միջազգային պարտավորություններին համապատասխան:

3. Քննադատություն և գիտական քննարկումներ

Գիտական շրջանակներում 2015 թվականի սահմանադրական բարեփոխման գնահատականը միանշանակ չէ: Վ.Ա. Իլյուխինան նշում է, որ 2015 թվականի խմբագրությամբ ձևակերպումը արտացոլում է անմեղության կանխավարկածի բովանդակության միայն հիմնական կորիզը, մինչդեռ դրա մնացած բաղադրիչ տարրերը դուրս են մնացել սահմանադրական կարգավորումից: Ըստ հեղինակի՝ սա կարող է հանգեցնել իրավական անորոշության, քանի որ հետագայում օրենսդիրը ձեռք կբերի քրեական դատավարության օրենսգիրքը փոխելու և այդ կերպ անմեղության կանխավարկածին առնչվող երաշխիքների ծավալը նվազեցնելու հնարավորություն[1]: Այս մոտեցման համաձայն՝ սահմանադրական մակարդակում սկզբունքի բաղադրիչների բացակայությունը թուլացնում է դրանց կայունությունը և կախվածության մեջ դնում ընթացիկ օրենսդրական քաղաքականությունից:

[1] ***Илюхина В.А.*** *Принцип презумпции невиновности: учебное пособие. – 2-е изд., перераб. и доп. – М.: Постер–М, 2023. - С. 6. – 18 с.*

Այլ հետազոտողներ շեշտադրում են, որ անմեղության կանխավարկածը համընդհանուր իրավական սկզբունք է, որը չի սահմանափակվում բացառապես քրեական դատավարության շրջանակներով: Այն ազդեցություն է գործում, օրինակ, վարչական գործերի քննության կարգի, կարգապահական պատասխանատվության կիրառման, ինչպես նաև Սահմանադրական դատարանում իրականացվող դատավարության վրա: Այս տեսանկյունից սահմանադրական ձևակերպման կրճատումը կարող է դժվարացնել տվյալ սկզբունքի կիրառումը քրեաիրավական ոլորտից դուրս, քանի որ բացակայում է դրա բաղադրիչ տարրերի անմիջական սահմանադրական հղումը[1]:

Միևնույն ժամանակ, համակարգային մոտեցում որդեգրած հեղինակները պաշտպանում են հակադիր դիրքորոշում: Նրանց կարծիքով, Սահմանադրության համառոտ և լակոնիկ բնույթը թույլ է տալիս օրենսդրությանը հարմարվել գործնական պահանջներին, մինչդեռ սկզբունքի մանրամասն բացահայտումը քրեական դատավարության օրենսգրքում ապահովում է արագ արձագանք իրավակիրառ պրակտիկայում առաջացող նոր մարտահրավերներին[2]: Բացի այդ, իրավունքի գերակայության սկզբունքը պահանջում է, որ իրավունքների սահմանափակման դեպքում առկա բոլոր կասկածները մեկնաբանվեն իրավունքը կրողի օգտին: Այդ պատճառով դատարանները կարող են կիրառել *in dubio pro reo* կանոնը ոչ միայն քրեական դատավարության հատուկ նորմերից, այլև սահմանադրական ընդհանուր հրահանգից բխելով:

Այսպիսով, գիտական քննարկումները ցույց են տալիս, որ 2015 թվականի սահմանադրական բարեփոխման շուրջ առկա են ինչպես քննադատական, այնպես էլ արդարացնող դիրքորոշումներ: Դրանք միավորվում են այն գիտակցման շուրջ, որ անմեղության կանխավարկածը շարունակում է մնալ իրավական համակարգի հիմնարար արժեքներից մեկը, իսկ դրա արդյունավետ իրագործումը կախված է ոչ միայն սահմանադրական ձևակերպումից, այլ նաև օրենսդրական զարգացման ընթացքից և դատական մեկնաբանության որակից:

4) <u>Անմեղության կանխավարկածը սահմանադրական սկզբունքների համակարգում և դատական պրակտիկայում</u>

Անմեղության կանխավարկածի սկզբունքը Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքում սերտորեն առնչվում է սահմանադրական կարգի և արդարադատության սկզբունքների ընդհանուր համակարգին: Այն լրացնում և կոնկրետացնում է այնպիսի հիմնադրույթներ, ինչպիսիք են Սահմանադրության գերակայությունն ու օրինականությունը, մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորումը, ինչպես նաև դատական իշխանության անկախությունը: Գործնական իմաստով անմեղության կանխավարկածի իրագործումը կախված է ոչ միայն դատարանների և իրավապահ մարմինների արդյունավետ

[1] ***Nobel, Artem P.*** *"Presumption of Innocence as a Principle of Administrative Offense Proceedings". Administrative law and procedure, 2021, № 1, c. 30–34. DOI: 10.18572/2071-1166-2021-1-30-34.*

[2] ***Bubalo, L., Pajić, D.*** *In dubio pro reo principle in modern criminal procedure. ResearchGate, 2019.*

գործունեությունից, այլև պաշտոնատար անձանց և հասարակության իրավագիտակցության մակարդակից:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը կարևոր դեր է կատարում անմեղության կանխավարկածի մեկնաբանման և պաշտպանության գործում: Իր դատավարական պրակտիկայում Սահմանադրական դատարանը բազմիցս հղում է կատարել անմեղության կանխավարկածին՝ որպես սահմանադրական իրավակարգի հիմնարար հիմքի: Մասնավորապես, դատարանը իր որոշումներից մեկում նշել է, որ անմեղության կանխավարկածը կրում է «մեղադրյալի օբյեկտիվ իրավական կարգավիճակի» բնույթ, որը սահմանված է Սահմանադրությամբ և ինքնին չի բացառում մեղավորության հնարավորությունը, սակայն պահանջում է, որպեսզի մեղքը ապացուցվի բացառապես օրենքով սահմանված պատշաճ ընթացակարգով[1]: Այսպիսով, Սահմանադրական դատարանը շեշտադրում է հավասարակշռության գաղափարը. պետությունը չի կարող անձին վերաբերվել որպես մեղավորի՝ առանց դատարանի դատավճռի, սակայն դա չի խոչընդոտում քննչական մարմիններին իրենց պարտականությունը կատարել՝ հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ՝ օրենքի շրջանակներում:

Ինչ վերաբերում է միջազգային դատական ատյանների ազդեցությանը, ապա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ևս նպաստում է անմեղության կանխավարկածի պահպանմանը Հայաստանում: Մասնավորապես, «Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի» գործով արձանագրվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում՝ այն հիմնավորմամբ, որ կալանքի ժամկետի երկարաձգման վերաբերյալ ազգային դատարանների որոշումներում օգտագործված ձևակերպումները փաստացի դիմողին ներկայացնում էին որպես մեղավոր, մինչդեռ դատավճիռ դեռևս կայացված չէր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը շեշտել է, որ դատական ակտերի լեզուն պետք է լիովին համապատասխան լինի անմեղության կանխավարկածի պահանջներին, և մեղավորության վերաբերյալ անգամ անուղղակի ակնարկն անթույլատրելի է[2]:

Նման որոշումներից հետո Հայաստանի Հանրապետությունը ձեռնարկում է քայլեր Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարումն ապահովելու ուղղությամբ՝ ներառյալ դատական պրակտիկայի ճշգրտումը և անհրաժեշտության դեպքում օրենսդրական փոփոխությունները՝ ապագայում նման խախտումները բացառելու նպատակով: Այս իրադրությունը ցույց է տալիս, որ անմեղության կանխավարկածը Հայաստանի Հանրապետությունում չի գործում մեկուսացված, այլ հանդիսանում է ազգային սահմանադրական կարգավորման և

[1] *ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի ՍԴՈ-871 որոշումը, https://www.concourt.am/decision/decisions/633eb3c7b5a67_sdv-871.pdf*

[2] *European Court of Human Rights, Case of Vardan Martirosyan v. Armenia (Application no. 13610/12), 2021 թվականի հունիսի 15-ի որոշումը // LawEuro, 2021, URL: https://laweuro.com/?p=15291*

մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմների փոխգործակցության արդյունք, ինչը էապես բարձրացնում է տվյալ սկզբունքի արդյունավետությունը:

Դատական մարմիններից բացի, անմեղության կանխավարկածի պահպանման անհրաժեշտության մասին մշտապես հիշեցնում են նաև այլ ինստիտուցիոնալ կառույցներ: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը իր տարեկան և հատուկ զեկույցներում պարբերաբար շեշտադրում է նշված սկզբունքի հրապարակային խախտման անթույլատրելիությունը, հատկապես պետական պաշտոնատար անձանց և զանգվածային լրատվամիջոցների կողմից: Վերջին տարիներին արձանագրվել են դեպքեր, երբ իշխանության ներկայացուցիչների հրապարակային հայտարարությունները մեղադրյալների վերաբերյալ արժանացել են քննադատության՝ անմեղության կանխավարկածը խախտելու հիմքով: Այդ համատեքստում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն անգամ հրապարակել է պաշտոնական պարզաբանումներ՝ ուշադրություն հրավիրելով այն հանգամանքի վրա, որ որոշ զանգվածային լրատվամիջոցներ, անդրադառնալով քննվող քրեական գործերին, «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ հռչակված անմեղության կանխավարկածի խախտմամբ» փաստացիորեն քննության տակ գտնվող անձանց ներկայացնում են որպես մեղավոր[1]: Նման արձագանքներն ու պարզաբանումները վկայում են պետության՝ իրավական մշակույթում անձի իրավունքների նկատմամբ հարգանքի մոդելը արմատավորելու ձգտման մասին. անմեղության կանխավարկածը պետք է պահպանվի ոչ միայն դատարանների, այլև հանրային խոսքի բոլոր մասնակիցների կողմից: Սա առանձնահատուկ կարևորություն է ստանում տեղեկատվության լայն շրջանառության պայմաններում, երբ մեղավորության վաղաժամ «պիտակավորումը» կարող է անդառնալի վնաս հասցնել անձի հեղինակությանը և կյանքի ընթացքին:

Այսպիսով, ընդհանրացնելով Հայաստանի Հանրապետությունում անմեղության կանխավարկածի իրացման երաշխիքները՝ կարելի է համառոտ ներկայացնել հետևյալ համակարգի մեջ.

- **Սահմանադրական երաշխիք**. անմեղության կանխավարկածն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 66-րդ հոդվածում և օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով: Այն խախտող ցանկացած օրենք կամ պետական մարմնի գործողություն կարող է ճանաչվել հակասահմանադրական:
- **Օրենսդրական հստակեցում**. քրեական դատավարության օրենսգիրքը և հարակից իրավական ակտերը բացահայտում են անմեղության կանխավարկածի բովանդակությունը՝ մանրամասն սահմանելով ապացուցման բեռի բաշխման

[1] *Հերքում. «Պյեռլուիջի Կոլինա» անուն, ազգանունով որևէ Իտալիայի քաղաքացի չի որդեգրել ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխա, https://www.moj.am/article/2591*

կանոնները, ապացույցների նկատմամբ պահանջները և մեղադրական կողմնակալության արգելքը:

- **Դատական վերահսկողություն**. ընդհանուր իրավասության դատարանները պարտավոր են անմեղության կանխավարկածը կիրառել գործնականում՝ մեղավորության չապացուցված լինելու դեպքում չեղարկելով մեղադրական դատավճիռները: Վերաքննիչ ատյանները վերանայում են գործերը՝ սկզբունքի պահպանման վերաբերյալ կասկածների առկայության պարագայում: Սահմանադրական դատարանն իրականացնում է օրենքների և իրավակիրառ պրակտիկայի Սահմանադրությանը համապատասխանության վերահսկողություն՝ հանդես գալով որպես սահմանադրական երաշխավոր:

- **Միջազգային վերահսկողություն**. որպես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի մասնակից պետություն՝ Հայաստանը պարտավորվում է հաշվի առնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները: Սա ապահովում է պաշտպանության լրացուցիչ մակարդակ, քանի որ անմեղության կանխավարկածի խախտման զոհ դարձած անձը կարող է դիմել Ստրասբուրգի դատարան, իսկ վերջինիս վճիռները ենթակա են պարտադիր կատարման պետության կողմից:

- **Լուսավորչական և բարեվարքային չափանիշներ**. իրավապահ մարմինների և դատական համակարգի շրջանակում աստիճանաբար հաստատվում են այնպիսի չափորոշիչներ, որոնք պահանջում են զսպվածություն և չեզոքություն քննվող գործերի վերաբերյալ հանրային գնահատականներում: Զանգվածային լրատվամիջոցներն ու պաշտոնատար անձինք գիտակցում են սահմանադրական իրավունքների նկատմամբ հարգանքի՝ իրենց պատասխանատվությունը, թեև առանձին խախտումների դեպքեր դեռևս արձանագրվում են:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում անմեղության կանխավարկածի երաշխիքների համակարգը ներկայացնում է սահմանադրահիրավական, օրենսդրական և ինստիտուցիոնալ միջոցների համակցված կառուցվածք, որոնք գործում են փոխկապակցված ձևով: Անմեղության կանխավարկածն ամրագրված է երկրի Հիմնական օրենքում, ամրապնդված է դատական պրակտիկայով, իսկ դրա պահպանումը դիտարկվում է որպես իրավական համակարգի հասունության և ժողովրդավարության զարգացման առանցքային ցուցանիշ:

<u>Ամփոփում</u>

Կատարված վերլուծությունը վկայում է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը զբաղեցնում է առանցքային տեղ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի համակարգում և նրա զարգացումն արտացոլում է պետահիրավական համակարգի կայացման ու վերափոխման ընդհանուր ընթացքը: 1995 թվականի Սահմանադրությունը սահմանեց հիմնադրույթները՝ ամրագրելով անմեղության կանխավարկածը մարդու հիմնական իրավունքների և ազատությունների շարքում: 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները վերահաստատեցին տվյալ սկզբունքի անփոփոխությունն ու

հիմնարար նշանակությունը՝ նրա ձևակերպումը թողնելով գործնականում անփոփոխ: 2015 թվականի սահմանադրական բարեփոխումը վերանայեց անմեղության կանխավարկածի տեքստային արտահայտությունը՝ այն ներկայացնելով ավելի սեղմ, սակայն առանց էության փոփոխության. Հայաստանը հստակորեն պահպանեց իր հավատարմությունը միջազգային պարտավորություններին և ժողովրդավարական արժեքներին՝ արձանագրելով, որ հանցագործության մեջ մեղադրվող անձը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն օրենքով սահմանված կարգով չի հաստատվել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Անմեղության կանխավարկածի դիտարկումը երեք սահմանադրական «փուլերի» համատեքստում թույլ է տալիս ձևակերպել մի շարք ընդհանուր եզրահանգումներ: Նախ՝ տվյալ սկզբունքն ունի ակնհայտ շարունակականություն. անկախ իրականացված սահմանադրական բարեփոխումներից, այն մշտապես մնացել է Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի անբաժանելի տարրը: Ոչ մի փոփոխություն չի նպատակադրել չեղարկել կամ թուլացնել այդ երաշխիքը. ընդհակառակը՝ պահպանվել է նրա բովանդակային հիմքը և զարգացել են պաշտպանության մեխանիզմները: Երկրորդ՝ արձանագրվել է անցում մանրամասն ձևակերպումներից դեպի առավել հակիրճ սահմանադրական արտահայտում, ինչը վկայում է օրենսդրի այն ընկալման մասին, որ սկզբունքի բաղադրիչ տարրերը բավարար չափով մշակված են ճյուղային օրենսդրության և դատական պրակտիկայի շրջանակում: Այս մոտեցումը համահունչ է սահմանադրական ձևակերպումների մինիմալիզմի արդի միտումներին: Երրորդ՝ գործող՝ 2015 թվականի Սահմանադրությունը խորացրել է ներգրավվածությունը մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների շրջանակում՝ սահմանադրական իրավունքների մեկնաբանությունը ուղղակիորեն կապելով միջազգային դատական և վերահսկող մարմինների պրակտիկայի հետ: Այդպիսով, Հայաստանի իրավական համակարգը բաց է առաջադեմ մոտեցումների ընկալման համար, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևակերպած դիրքորոշումների, որոնք բացառում են մեղավորության վերաբերյալ ցանկացած ենթադրություն մինչև դատարանի վճիռը:

Գործնական հարթությունում անմեղության կանխավարկածը Հայաստանի Հանրապետությունում հանդես է գալիս որպես ուղղակի գործող սահմանադրական սկզբունք: Դա հաստատվում է թե՛ Սահմանադրական դատարանի գործունեությամբ, որը քննում է տվյալ սկզբունքը շոշափող հարցեր, և թե՛ դատական համակարգի բարեփոխումներով, որոնք ուղղված են դատական անկախության և արդարադատության ապահովմանը: Միևնույն ժամանակ, առկա է սկզբունքի *de facto* լիարժեք պահպանման շարունակական ապահովման անհրաժեշտություն: Պահանջվում է իրավապահ մարմինների աշխատակիցների և պետական պաշտոնատար անձանց մշտական վերապատրաստում անմեղության կանխավարկածի չափանիշների վերաբերյալ, ինչպես նաև հասարակության և լրատվական դաշտի իրավագիտակցության բարձրացում՝

մեղադրյալների իրավունքների նկատմամբ հարգանքի մշակույթի ձևավորման ուղղությամբ: Միայն այն դեպքում, երբ անմեղության կանխավարկածը գիտակցվի և պահպանվի բոլորի կողմից՝ քննիչից և դատավորից մինչև լրագրող և քաղաքական գործիչ, կարելի է խոսել դրա լիարժեք իրագործման մասին:

Այսպիսով, ընդհանրացնելով կատարված վերլուծության արդյունքները՝ անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքում անմեղության կանխավարկածը ոչ թե պարզապես իրավական ձևակերպում է, այլ իրավական պետության հիմնասյուներից մեկը:

2. Անմեղության կանխավարկածի ամրագրումը Սահմանադրությունում պայմանավորված է Հայաստանի Հանրապետության՝ համամարդկային արժեքներին հավատարմությամբ և ապահովվում է սահմանադրական վերահսկողության արդյունավետ մեխանիզմներով:

3. Գործող՝ 2015 թվականի Սահմանադրությունը և դրա կիրառման պրակտիկան հաստատում են, որ ՀՀ-ում անմեղության կանխավարկածը դիտարկվում է որպես անշրջելի կանոն, որից շեղումներ չեն թույլատրվում ո՛չ խաղաղ, ո՛չ էլ արտակարգ պայմաններում:

4. Քննարկվող սկզբունքի ընդգրկումը սահմանադրական արժեքների համակարգում յուրաքանչյուր անձի ապահովում է կամայական մեղադրանքից և անհիմն դատապարտումից պաշտպանությամբ՝ այդպիսով ամրապնդելով հասարակության վստահությունը արդարադատության նկատմամբ:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, դատական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է 05.07.1995 թ.):
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է 27.11.2005 թ.):
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է 06.12.2015 թ.):
4. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք (30.06.2021):
5. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի մարտի 30-ի ՍԴՈ-871 որոշումը, https://www.concourt.am/decision/decisions/633eb3c7b5a67_sdv-871.pdf
6. European Court of Human Rights. Case of *Vardan Martirosyan v. Armenia* (Application no. 13610/12), 2021 թվականի հունիսի 15-ի որոշումը // LawEuro, 2021, URL: https://laweuro.com/?p=15291
7. **Բաղդասարյան Գ.** Անմեղության քրեադատավարական կանխավարկածն ու մեղավորության քրեաիրավական կանխավարկածը: Բանբեր Երևանի

համալսարանի. Իրավագիտություն 2024, Vol. 15, No. 1(40), մայիս, https://doi.org/10.46991/BYSU:C/2024.15.1.124

8. **Астафичев П.А.** К вопросу о презумпции невиновности в российском публичном праве: взгляд конституционалиста // Вестник Санкт-Петербургского университета МВД России. 2025. № 2 (106), https://doi.org /10.35750/2071-8284-2025-2-61-71.

9. **Богатых Н.П.** Принцип уважения чести и достоинства личности в совокупности с другими принципами в уголовном процессе // Вестник Московского университета им. С.Ю. Витте. Серия 2: Юридические науки. 2022. № 2.1 (33).

10. **Илюхина В.А.** Принцип презумпции невиновности: учебное пособие. – 2-е изд., перераб. и доп. – М.: Постер–М, 2023. – 18 с.

11. **Новичкова Е.Е., Матвеева О.С.** Принцип презумпции невиновности в административном праве // Социальное управление. 2023. Т. 5, № 7, URL: https://smgmt.ru/index.php/smgmt/article/view/82

12. **Решняк М.Г., Боташева З.Х.** Презумпция невиновности: к вопросу о «незыблемости» отдельных международных принципов // Пробелы в российском законодательстве. - 2022. - Т. 15. - №5.

13. **Шупицкая О.Н.** Презумпция невиновности как конституционный феномен // Правоприменение. 2023. Т. 7. № 1.

14. **Bubalo, L., Pajić, D.** In dubio pro reo principle in modern criminal procedure. ResearchGate, 2019.

15. **Chia, M.** The Presumption of Innocence: A Golden Thread Always To Be Seen. Singapore Law Journal, 2021 (Forthcoming), SSRN Paper No. 3787833. https://ssrn.com/abstract=3787833

16. **Iacob, O.** Brief Analysis of the Importance given to the Presumption of Innocence at International and National Level // Athens Journal of Law. 2025. Vol. 11, No. 3.

17. **Nobel, Artem P.** «Presumption of Innocence as a Principle of Administrative Offense Proceedings.» Administrative law and procedure, 2021, № 1, DOI: 10.18572/2071-1166-2021-1-30-34.

18. Հերքում. «Պյեռլուիջի Կոլինա» անուն, ազգանունով Իտալիայի որևէ քաղաքացի չի որդեգրել ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխա,
https://www.moj.am/article/2591

ПРЕЗУМПЦИЯ НЕВИНОВНОСТИ В СИСТЕМЕ ПРИНЦИПОВ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Аннотация

Настоящая статья посвящена анализу одного из основополагающих принципов конституционного права Республики Армения — принципу презумпции невиновности, а также раскрытию его правовой философии. В центре исследования находится место и значение данного принципа в системе основных прав и свобод человека, а также его роль в обеспечении справедливого осуществления правосудия и ограничении публичной власти. Актуальность исследования обусловлена тем, что презумпция невиновности выступает не только в качестве уголовно-процессуальной гарантии, но и как конституционная ценность, тесно связанная с принципами правового государства, защиты человеческого достоинства и верховенства права.

Целью статьи является раскрытие конституционно-правового содержания презумпции невиновности и этапов её развития в Республике Армения на основе сравнительного анализа редакций Конституций 1995, 2005 и 2015 годов, а также оценка механизмов её реализации в правоприменительной практике. В работе исследуются международно-правовые стандарты закрепления презумпции невиновности и их влияние на национальную правовую систему. Особое внимание уделяется практике Конституционного Суда Республики Армения и Европейского суда по правам человека, формирующей обязательные подходы к толкованию данного принципа.

В статье обосновывается вывод о том, что конституционный подход Республики Армения к презумпции невиновности характеризуется преемственностью при одновременной эволюции её нормативного выражения. Подчеркивается, что действующая Конституция 2015 года сохраняет фундаментальное содержание данного принципа, одновременно укрепляя его связь с международными стандартами защиты прав человека. В результате исследования делается вывод о центральной роли презумпции невиновности в современной системе конституционных гарантий Республики Армения и о необходимости её строгого соблюдения не только судами, но и всеми субъектами публичной власти.

Ключевые слова: презумпция невиновности, конституционное право, Конституция Республики Армения, права и свободы человека, правовое государство, судебная практика, Европейский суд по правам человека.

THE PRESUMPTION OF INNOCENCE IN THE SYSTEM OF PRINCIPLES OF CONSTITUTIONAL LAW OF THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

This article is devoted to the analysis of one of the fundamental principles of the constitutional law of the Republic of Armenia - the principle of the presumption of innocence, and to the exploration of its underlying legal philosophy. The study focuses on the place and significance of this principle within the system of fundamental human rights and freedoms, as well as on its role in ensuring the fair administration of justice and limiting public authority. The relevance of the research is conditioned by the fact that the presumption of innocence functions not only as a criminal procedural safeguard but also as a constitutional value closely connected with the principles of the rule of law, protection of human dignity, and the supremacy of law.

The purpose of the article is to reveal the constitutional and legal content of the presumption of innocence and the stages of its development in the Republic of Armenia on the basis of a comparative analysis of the 1995, 2005, and 2015 versions of the Constitution, as well as to assess the mechanisms of its implementation in law-enforcement practice. The study examines international legal standards governing the presumption of innocence and their influence on the national legal system. Special attention is given to the case law of the Constitutional Court of the Republic of Armenia and the European Court of Human Rights, which establishes binding approaches to the interpretation of this principle.

The article substantiates the conclusion that the constitutional approach of the Republic of Armenia to the presumption of innocence is characterized by continuity, combined with the evolution of its normative formulation. It is emphasized that the current 2015 Constitution preserves the fundamental substance of this principle while simultaneously strengthening its connection with international human rights protection standards. As a result of the research, the article concludes that the presumption of innocence occupies a central place in the modern system of constitutional guarantees of the Republic of Armenia

and requires strict observance not only by the courts, but by all subjects of public authority.

Keywords: presumption of innocence, constitutional law, Constitution of the Republic of Armenia, human rights and freedoms, rule of law, judicial practice, European Court of Human Rights.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 09.12.2025 թ., տրվել է գրախոսության 09.12.2025 թ., ընդունվել է տպագրության 15.12.2025 թ.: